ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հուլիսի 2025 թվականի N 76-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՄԵՋ ԳՅՈՒՂՈՒՄ ԹՎԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՓՈՂՈՑՆԵՐ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 67-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 12-րդ կետով՝Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Գետամեջ գյուղի 07-025-0205-0077, 07-025-0563-0001 և 07-025-0564-0001 կադաստրային ծածկագրերի տակ գտնվող դաշտամիջյան ճանապարհն անվանակոչել թվային կարգով՝ 23-րդ փողոց:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Գետամեջ գյուղի 07-025-0513-0003 կադաստրային ծածկագրի տակ գտնվող դաշտամիջյան ճանապարհն անվանակոչել թվային կարգով՝ 24-րդ փողոց:

3. Սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Գետամեջ գյուղում թվային կարգով փողոցներ անվանակոչելու մասին» N 67-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ԻՍՊԻՐՅԱՆ ԱՆԻ

ԽԱՌԱՏՅԱՆ ՄԱՐՏԻԿ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՕՋՆԵՑՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԹՈՎՄԱՍ

ԱՎԴԱԼՅԱՆ ՌՈՄԱՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԻ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՆՆԱ

ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՊԱՊՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍՈՖԻԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**